# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ
№ 88

ք. Եղեգնաձոր
01 դեկտեմբերի 2014 թ.

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ կետերի , ՀՀ Նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի ՆՀ-544-Ն հրամանագրի, ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի <<2014 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու մասին>> № 1112-Ն որոշման, ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ '

1. Հանձնարարել Եղեգնաձորի և Վայքի տարածքային զինվորական կոմիսարներին /Ա.Սարգսյան, Կ.Հակոբջանյան/ 2014 թվականի դեկտեմբեր-2015 թվականի փետրվար ամիսների ընթացքում օրենքով սահմանված կարգով ՀՀ Վայոց ձորի մարզում կազմակերպել 1987 – 1996 թվականներին ծնված ՀՀ քաղաքացիների զորակոչը՝ պարտադիր զինվորական ծառայության:

2.Մարզում 2014 թվականի ձմեռային զորակոչը կազմակերպելու համար ստեղծել տարածքային զորակոչային հանձնաժողովներ Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջաններում՝ համաձայն սույն որոշման № 1 և № 2 հավելվածների :

3.Զորակոչիկների առողջական վիճակը ստուգելու համար զորակոչային տեղամասերում ստեղծել տարածքային բժշկական հանձնաժողովներ՝ համաձայն № 3 և № 4 հավելվածների:

4.Առաջարկել՝

1) ՀՀ Վայոց ձորի ոստիկանության մարզային վարչությանը /Լ. Յազիչյան/.

ՀՀ կառավարության որոշման պահանջների ոգով, իր իրավասության շրջանակներում աջակցել զորակոչի տարածքային հանձնաժողովների

աշխատանքներին՝ զորակոչը նախատեսված ժամկետում սահմանված կարգով կազմակերպելու համար,

2) ՀՀ Վայոց ձորի մարզային դատախազությանը /Ն.Ավագյան/.
Օրենքով սահմանված կարգով զորակոչից խուսափողների նկատմամբ հարուցել քրեական գործեր, հանձնարարել համապատասխան մարմիններին բացահայտելու նրանց գտնվելու վայրը և միջոցներ ձեռնարկել հանրապետություն վերադարձնելու և 2014 թվականի ձմեռային զորակոչին մասնակցելու համար:

5.Հանձնարարել <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն Ա.Կարապետյանին, <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի տնօրեն Ռ.Ասլանյանին, Ջերմուկի ԱԿ տնօրեն Մ.Նալբանդյանին նպաստել բժշկական հանձնաժողովների աշխատանքներին , տրամադրել բժշկական սարքավորումներ, դեղամիջոցներ և անհրաժեշտ գույք:

6.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը /Ն. Սիմոնյան/ հսկողություն սահմանել համայնքներում զորակոչի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վրա և առկա վիճակի վերաբերյալ իրազեկել մարզային հանձնաժողովին:

7.Առաջարկել մարզի բոլոր համայնքների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների /անկախ սեփականության և իրավաբանական ձևից/ ղեկավարներին՝ /հիմք <<Զինապարտության մասին>> ՀՀ օրենք, հոդված 4, կետ 1/, ապահովել իրենց ենթակայության տակ գտնվող կազմակերպություններում աշխատող զորակոչային տարիքի ՀՀ քաղաքացիների ներկայությունը զինվորական կոմիսարիատներ՝ համաձայն ներկայացված ցուցակների կամ ծանուցագրերի:

8.Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել ՀՀ Վայոց ձորի մարզային զորոկոչային հանձնաժողովին:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 -Ի
№ 88 ՈՐՈՇՄԱՆ

Եղեգնաձորի տարածքային զորակոչային հանձնաժողով

1. Ա.Սարգսյան - եղեգնաձորի տարածքային զինվորական կոմիսար - հանձնաժողովի նախագահ,

2. Վ.Պողոսյան - ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության առաջատար մասնագետ. -հանձնաժողովի անդամ

3. Ս.Գալստյան - ՀՀ ոստիկանության եղեգնաձորի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության մայոր, հանձնաժողովի անդամ

4. Կ.Հարությունյան -եղեգնաձորի ավագ դպրոցի տնօրեն, հանձնաժողովի անդամ

5. Հ.Ստեփանյան -<<եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի ավագ բժիշկ, հանձնաժողովի անդամ

6. Պ.Առաքելյան -Վետերանների խորհրդի նախագահ

7. Ն. Ֆիլկովա -հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 2
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 -Ի
№ 88 ՈՐՈՇՄԱՆ

Վայքի տարածքային զորակոչային հանձնաժողով

1. Կ.Հակոբջանյան -Վայքի տարածքային զինվորական կոմիսար հանձնաժողովի նախագահ,

2. Խ.Նազարյան - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ավագ բժիշկ հանձնաժողովի անդամ

3. Գ.Գերասիմյան - ՀՀ ոստիկանության Վայքի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության մայոր, հանձնաժողովի անդամ

4. Թ.Հակոբյան -Վայքի ավագ դպրոցի տնօրեն -հանձնաժողովի անդամ

5. Ա.Առաքելյան -Վայքի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

6. Ա.Դավթյան - հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 3
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի
№ 88 ՈՐՈՇՄԱՆ

Եղեգնաձորի տարածքային զորակոչային բժշկական հանձնաժողով

1. Ա.Սարգսյան - Եղեգնաձորի տարածքային զինվորական կոմիսար- հանձնաժողովի նախագահ
2. Ք. Շահբազյան - <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի թերապևտ - հանձնաժողովի անդամ
3. Ի. Շիրինյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի ակնաբույժ - հանձնաժողովի անդամ
4. Հ. Ստեփանյան - <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի մաշկաբան - հանձնաժողովի անդամ
5. Ն.Կարապետյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի վիրաբույժ - հանձնաժողովի անդամ
6. Վ.Վարդանյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի քիթ-կոկորդ- ականջաբան - հանձնաժողովի անդամ
7. Հ.Հովհաննիսյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի սրտաբան - հանձնաժողովի անդամ
8. Ա.Թունյան - <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի հոգեբույժ - հանձնաժողովի անդամ
9. Գ.Սիմոնյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի նյարդաբան - հանձնաժողովի անդամ
10. Ե.Դավթյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի ավագ բուժքույր- հանձնաժողովի անդամ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ № 4
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2014 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի
№ 88 ՈՐՈՇՄԱՆ

Վայքի տարածքային զորակոչային բժշկական հանձնաժողով

1. Կ.Հակոբջանյան -Վայքի տարածքային զինվորական կոմիսար - հանձնաժողովի նախագահ,
2. Ռ.Ասլանյան - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի մաշկաբան, ավագ բժիշկ- հանձնաժողովի անդամ
3. Խ.Նազարյան -<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի վիրաբույժ - հանձնաժողովի անդամ
4.Ա.Բաղդասարյան - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի թերապևտ - հանձնաժողովի անդամ
5.Հ.Հովսեփյան -<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ակնաբույժ - հանձնաժողովի անդամ
6.Ա.Ասլանյան -<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի քիթ-կոկորդ-ականջի բժիշկ- հանձնաժողովի անդամ
7.Մ.Ասլանյան - <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի սրտաբան - հանձնաժողովի անդամ
8.Ա.Կարապետյան -<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի նյարդաբան - հանձնաժողովի անդամ
9. Ա.Թունյան -<<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի հոգեբույժ - հանձնաժողովի անդամ
10.Լ.Կարապետյան -<<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ավագ բուժքույր – հանձնաժողովի անդամ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ